ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Մայիսի 22-ին, երեքշաբթի:

Այսօր, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով ուղևորվեց Փարիզ և ժամանեց Ռուասիի «Շարլ դը Գոլ» օդանավակայանը: Օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին տ. Սերովբե, տ. Գյուտ սրբազանները, տ. Ներսեհ ծ. վրդ. Փապուճյանը, տ. Նորվան վրդ. Զաքարյանը, տ. Առաքել աբղ. Գալայճյանը, տ. Մեսրոպ քհն. Ժամկոչյանը, տ. Պարգև քհն. Մերճանյանը և տ. Ղևոնդ քհն. Սոմունճյանը:

Հայոց Հայրապետին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին նաև Փարիզի հայոց կրոնական ընկերակցության և ներկայացուցչական վարչական ժողովի պատվարժան անդամները՝ գլխավորությամբ իրենց ատենապետների՝ Նուրհան Ֆրենկյանի և Արմեն Բարսեղյանի, փարիզահայ բոլոր կազմակերպությունները, հայ մամուլի ներկայացուցիչներ և ժողովրդի հոծ բազմություն:

Օդանավակայանում, հանուն Ֆրանսիայի հանրապետության և կառավարության, Հայոց Հայրապետին բարի գալուստ մաղթեց արտաքին գործոց մինիստրության պրոտոկոլի պետ պրն. Ժան Լարշեն:

Հայոց Հայրապետին օդանավակայանում ողջունեցին նաև Փարիզի քույր եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Ֆրանսիայում Սովետական Միության դեսպանի անունից Հայոց Հայրապետին ողջունեց և բարի գալուստ մաղթեց դեսպանության առաջին քարտուղար պրն. Ռուբեն Սահակյանը:

Օդանավակայանից Հայոց Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվեց Փարիզ հայոց ս. Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցի, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով:

Հանուն փարիզահայության Վեհափառ Հայրապետի շնորհաբեր ներկայությունը ողջունեց Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը՝ խանդավառ ու տպավորիչ մի ողջերձով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, առաջին իսկ առիթով, ողջունեց Փարիզի հայությանը հետևյալ խոսքով.



ՀԱՑՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊԱՊԱԿԱՆ ՆՎԻՐԱԿ, ԿԱՐԴԻՆԱԼ ԷԳԱՆՈ ՌԻԿԻ
ԼԱՄԲԵՐՏԻՆԻԻ ՀԵՏ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐՍԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄ: ՍՍՌ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՈՎ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ
(22 մայիսի 1979 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ամէն»:

Վերստին Մենք պետք է գոհություն մատուցանենք Բարին Աստուծուն, որ անգամ մը ևս պատեհությունը պարգևեց Մեզի, հրավերովը Գերշն. Մեր եղբոր՝ Սերովբե արքեպիսկոպոսի, այցի գալու Ֆրանսայի մեր եկեղեցիներուն և մեր հավատացյալներուն: Բավական երկար ճանապարհորդություն մը կատարելե հետո և այցելելե վերջ եկեղեցիները հարավային և կեդրոնական Ֆրանսայի շրջաններուն, որոնց թվումը կատարեց արդեն սրբազան Հայրը, անավասիկ ժամանեցինք Փարիզ, ձեր գեղեցիկ երկրի այս մայր քաղաքը, կրկին անգամ Մայր Աթոռ ս. Էջմիածնեն բերելու համար Աստուծո օրհնությունը բոլորիդ, ու մանավանդ եղբայրական սիրո ողջույնները Հայաստանի ձեր հավատակից քույրերուն և եղբայրներուն:

Այս անգամ ալ կուգանք ձեզի Մեր սիրտը բանալու և Մեր սրտեն բխած լավագույն մաղթանքները և օրհնությունները բաշխելու, նաև հետաքրքրվելու ձեր կրոնական-եկեղեցական կյանքի իրագործումներով: Գուցե առիթներ ունենանք այդ առնչությամբ որոշ խորհուրդներ և պատվերներ տալու Մեր հոգևոր եղբայրներուն, ունենալով մեկ հիմնական նպատակ. որ Փարիզի և շրջակայքի Մեր հոգևոր զավակները նույնպես ամուր կանգնած մնան մեր սուրբ հավատքի վեմին վրա, հավատարիմ մեր առաքելական մայր եկեղեցիին, պահեն բոլոր այն ավանդությունները, որոնք կուգան մեզի հին դարերեն և մեր լուսաբնակ նախահայրերեն, պահեն-պահպանեն այն բոլոր առաքինությունները, որոնք քրիստոնեական են և հայաշունչ ու հայաբույր, և այսպիսով ավելի և ավելի զորացնեն հիմքերը արտասահմանի մեր հայ եկեղեցական և հայկական կյանքին: Մեր բոլորիս իղձն է, մանավանդ Մեր պարտականությունն ալ, իբրև առաջին սպասավոր, աղոթել և աշխատիլ՝ պահելու համար ամբողջ և անձնվազ մեր համայն ժողովուրդը, իբրև եկեղեցի, իբրև հոգևոր եղբայրություն, անկախ այն հանգամանքեն, թե ուր կգտնվին մեր ժողովուրդի զավակները այս աշխարհի վրա տարածված: Աշխարհագրական հեռավորությունները մեզի համար արգելք չեն և չեն ալ կրնար ըլլալ, որպեսզի մենք շարունակենք մեր առաքելությունը, որպեսզի մեր եկեղեցին շարունակե իր առաքելությունը, պահելու համար ամբողջ և անաղարտ մեր հոգևոր և բարոյական միասնությունը մեր Մայր եկեղեցիով:

Կողջունենք ձեզ բոլորդ, սիրով և կարոտով: Կսիրենք ձեր այս աղոթքի տունը. գեղեցիկ է, ջերմություն մը կա, հայկական շունչ կա, դարերու խորհուրդը նաև, որ այս կամարներեն մեզի կբաշխվի: Մեզի համար այս սուրբ եկեղեցին թանկագին է նաև, որովհետև այստեղ կգործեն Մեր ամենահարազատ գործակիցները, մեր հոգևորական դասը, իրենց գլուխը ունենալով Մեր եղբայրը՝ գերշն. Սերովբե արքեպիսկոպոսը, որ անավասիկ գրեթե այնքան ժամանակե ի վեր, ինչքան Մենք ուրբ Էջմիածնա Աթոռին վրա կգտնվինք, ինքն ալ ամուր կերպով, հաստատ կերպով կանգնած է այստեղ, իբրև Մայր Աթոռ ս. Էջմիածնի հայրապետական պատվիրակ: Կմաղթենք իրեն երկար և քաջառողջ կյանք, որպեսզի տակավին երկար տարիներ շարունակե ծառայել, նվիրվիլ այս եկեղեցիին, զոր ինք կսիրե, կպաշտե հոգիով, սրտով, և այն ժողովուրդին, որուն հարազատ զավակն է:

Մեր ողջույնը և օրհնությունը կբերենք նաև հոգևոր դասու Մեր մյուս

եղբայրներուն Գյուտ սրբազանին, որ աջ բազուկն է Սերովբե արքեպիսկոպոսին, մեր երիտասարդ վարդապետներուն, քահանա հայրերուն, Մեր ողջույնը և գնահատանքը մանավանդ նորընտիր եկեղեցական վարչության, որուն գլուխը կգտնվի մեթր Արմեն Բարսեղյան, և բոլոր անոնց, որոնք այս կամ այն չափով կնպաստեն եկեղեցվո և համայնքի պայծառության և հառաջդիմության:

Կխորհինք թե տակավին առիթներ պիտի ունենանք հանդիպելու թե՛ այս եկեղեցվո կամարներուն տակ և թե՛ այլ հավաքույթներու ընթացքին, և պիտի կարողանանք ձեզի Մեր սրտեն բխած բոլոր բարի մտածումները, զգացումները և մաղթանքները բաշխել:

Հետևաբար, Մենք ուրախ սրտով կրկին անգամ կողջունենք ձեզ բոլորդ, և Աստուծո օրհնությունը կհայցենք ձեզի՝ ամենուդ համար:

Թող Տերը անսասան պահե մեր Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին, և միշտ պայծառ ու շեն մնան մեր աղոթքի տուները՝ լեցուն միշտ մեր հավատացյալ զավակներով:

«Շնորհք և սէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանսդ»: Ամեն:

Եկեղեցում տեղի ունեցած արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Փարիզի «Ուեստմինստեր» հյուրանոցում Իրեն հատկացված հարկաբաժին:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՓԱՐԻԶՈՒՄ

23 մայիսի, չորեքշաբթի:

Առավոտյան ժամը 10.30-ից սկսած Վեհափառ Հայրապետը Փարիզի հայոց առաջնորդարանում տեսակցություններ ու հանդիպումներ ունեցավ՝

ա) Ֆրանսիական ռադիոյի «Ֆրանս կյուլտյուր» կայանի թղթակից Ֆրանսուա լը Տագատի հետ.

բ) Հ. Բ. Ը. Միության Փարիզի մասնաճյուղի պատվիրակության անդամներ դոկտ., պրոֆ. Մկրտիչ Տեր-Կարապետյանի, պրն. Երվանդ Ադամյանի և պրն. Արթո Համբարձումյանի հետ.

գ) Կանադահայ մի խումբ ազգայիններ, ապա պրն. Վահրամ Դավիթխանյանի հետ:

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՓԱՐԻԶԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆՈՒՄ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, ժամը 13-ին, Փարիզի արքեպիսկոպոս, կարդինալ Ֆրանսուա Մարտին կաթոլիկ արքեպիսկոպոսարանում, ի պատիվ Հայոց Հայրապետի, տվեց սիրո ճաշ, որին ներկա եղան տ. Սերովբե և տ. Գյուտ սրբազանները, Փարիզի կաթոլիկ արքեպիսկոպոսի փոխանորդ մոնսենյոր Դանիել Պեզրիլը, մոնսենյոր Դեկանը, արքեպիսկոպոսարանի քարտուղար Բայր Հյուգը և այլ հրավիրյալներ:

Սիրո սույն ճաշն անցավ եղբայրական ջերմ մթնոլորտում, էկումենիկ ոգով:

ԱՅՑ ՓԱՐԻԶՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Ժամը 17-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Սերովբե, տ. Գյուտ սրբազանների և Իր մնայուն շքախմբի անդամների, քաղաքա-

վարական այցելություն տվեց Ֆրանսիայում Սովետական Միության արտակարգ և լիազոր-դեսպան, Նորին Գերազանցություն Ստեֆան Զերվոնենկոյին, որը նոր դեսպանատան շքամուտքի առաջ ջերմորեն ընդունեց Հայոց Հայրապետին և առաջնորդեց Նրան դեսպանատան ընդունելության դահլիճ:

Հայոց Հայրապետի և մեծահարգ պրն. դեսպանի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ շուրջ մեկ ժամ տևողությամբ: Զրույցին ներկա էր նաև դեսպանության առաջին քարտուղար Ռուբեն Սահակյանը:

Հյուրասիրությունից հետո պրն. դեսպանը Հայոց Հայրապետին առաջնորդեց և ծանոթացրեց նորակառույց դեսպանատան հոյակապ դահլիճներին:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 24-ին, հինգշաբթի:

Այսօր Համբարձման տոնն է: Այս առթիվ Փարիզի հայոց Մայր եկեղեցում ս. պատարագ մատուցեց հայրապետական շքախմբի անդամ և վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Եկեղեցին և նրա շրջափակը լցվել էր հայ հավատացյալների բազմությամբ: Այստեղ էին նաև Փարիզի և շրջակայքի հայկական դպրոցների ավելի քան 300 աշակերտներ, որոնք սուրբ հաղորդություն ստացան:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Վեհափառ Հայրապետը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԻՆ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ
(24 մայիսի 1979 թ.)

«Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Ամէն»:

Այսօր ինչ գեղեցիկ օր է: Երեկվան անձրևեն վերջ երկինքը իր երեսը բացավ: Արևը պայծառ կշողա, աշխարհին կբաշխե լույս ու ջերմություն, և մարդիկ կուրախանան: Դուք ալ ուրախ եք կտեսնեմ: Ձեր աչքերն ալ կծըպտին, և այս արևոտ օրին՝ հավաքված եք այս աղոթքի Տունին մեջ, որովհետև այսօր տոնական օր է, Համբարձման տոնն է, որ ավելի կգեղեցկացնե այս օրը:

Ամեն անգամ, երբ այսպիսի տոնական առիթով մենք եկեղեցի կուգանք և ներկա կգտնվինք սուրբ պատարագին, մեր սրտերը կզվարթանան, մեր հոգիներեն ներս նոր արև կծագի: Երկինքի արևը շատ գեղեցիկ է, պայծառ, հրաշալի, լույս ու ջերմություն բաշխող բոլորիս, բայց եկեղեցվո կամարներուն տակ ալ, երբ այսպիսի կրոնական արարողություններու ընթացքին սուրբ Խորանի առջև կգտնվինք, արև մը ևս կծագի մեր էության մեջ, որ կլուսավորե մեր հոգին և կջերմացնե մեր սիրտը:

Սիրելի երեխաներ, ես հատկապես ձեզի համար եկա այսօր, որ ձեզի խոսիմ:

Սիրելի աղջիկներ և տղաներ, այսօր մենք կհիշենք նշանավոր դեպք մը, որ երկու հազար տարի առաջ տեղի ունեցած է: Խոսքը կվերաբերի մեր Տիրոջ և Փրկչին՝ Հիսուսի Քրիստոսի Համբարձումին, այսինքն երկինք բարձրանալուն:

Մենք բոլորս քրիստոնյաներ ենք: Դուք ալ քրիստոնյաներ եք, չէ՞. Հայաստանյայց եկեղեցվո զավակներ եք և գիտեք, թե ինչ կնշանակե քրիստոնյա ըլլալ:

Քրիստոնյա ըլլալ կնշանակե այս աշխարհի վրա ապրիլ Քրիստոսի անունով, Քրիստոսի պաշտամունքով, Քրիստոսի հանդեպ սիրով: Քրիստոնյա ըլլալ կնշանակե Քրիստոսի պատվիրանները հարգել և գործադրել մեր կյանքին մեջ, մեր առօրյա կյանքին մեջ: Միայն խոսքով չէ, որ քրիստոնյա պիտի ըլլանք, այլ մեր կենդանի գործերով: Դուք գիտեք անշուշտ, որ Քրիստոս աշխարհ եկավ, որպեսզի մարդկությունը փրկե չարիքներե և մեղքերե: Անիկա Աստուծո Որդին էր, սովորական մարդ չէր մեզի պես: Աստուծո Որդին էր, բայց մարդու կերպարանք առավ, հետևաբար և՛ Աստված էր, և՛ մարդ:

Եվ իբրև մարդ, աշխարհի վրա ապրեցավ Ֆրանսայեն շատ հեռու երկրի մը մեջ՝ Երուսաղեմի երկրին մեջ, Հրեաստանի մեջ: Բեթղեհեմի մեջ ծնավ ս. կույս Մարիամեն հրաշալի պայմաններու ներքև, և երբ ժամանակը եկավ, երբ ինք արդեն երեսուն տարեկան եղավ, աստվածային տնօրինությամբ ժողովուրդի մեջ մտավ և սկսավ Աստուծո խոսքը քարոզել: Եվ Հիսուս ի՞նչ ուզեց: Հիսուս ուզեց, որ մարդիկ խաղաղ ապրին, սիրով ապրին իրար հետ: Հիսուս կամեցավ, որ մարդոց միջև թշնամությունները վերնան, որ մարդիկ չարություններ չընեն, որ մարդիկ մեղքեր չգործեն, կատարյալ ըլլան կրցածնուն չափ, և աշխարհի վրա արդարություն ըլլա:

Ահա այսպիսի գեղեցիկ պատվիրաններ սկսավ քարոզել իր աշակերտներուն և իր շուրջը հավաքված բազմություններուն: Սակայն բոլորը չէ, որ Հիսուսին հասկցան. ոմանք անոր դեմ թշնամացան և հալածեցին զայն: Եվ ի վերջո չար մարդիկ Հիսուսը դատապարտեցին մահվան: Հիսուսին չարչարանքներու և տառապանքներու ենթարկելե վերջ, խաչի վրա զինք սպանեցին, և հետո մարմինը թողուցին գերեզմանի մը մեջ:

Սակայն ահա այստեղ է, որ մեծ հրաշք մը պատահեցավ, որովհետև, ինչպես ըսի քիչ մը առաջ, Հիսուս սովորական մարդ մը չէր, այլ նաև Աստված, և հետևաբար այդ աստվածային ուժով, աստվածային զորությամբ շունչ ու կենդանություն ստացավ, կես գիշերեն հետո գերեզմանը բացվեցավ և հարություն առավ: Այդ հիշատակը, Հիսուսի հրաշալի հարության սուրբ հիշատակը մենք ամեն տարի կտոնենք Զատկին: Հարութենեն հետո Հիսուսի հոգին աներևույթ կերպով տակավին քառասուն օր շրջեցավ երկրի վրա, երբեմն նույնիսկ երևաց իր աշակերտներուն, ինչպես կպատմե սուրբ Ավետարանը:

Բայց քառասուն օր անց Հիսուս վերջնականապես հեռացավ, բաժնվեցավ այս աշխարհեն, բարձրացավ երկինք իր Հորը մոտ, Աստուծո մոտ: Ահա այդ հիշատակին նվիրված է այսօրվան տոնը, սիրելի երեխաներ, Հիսուսի համբարձումի հիշատակին:

Հիսուս բարձրացավ երկինք, բայց իր խոսքը մնաց աշխարհի վրա: Իր աշակերտները չմոռցան իր պատվիրանները, իր պատգամները, և մանավանդ Հոգեգալուստեն հետո անոնք տարածվեցան ամբողջ աշխարհով մեկ դեպի արևմուտք, դեպի արևելք, հյուսիս և հարավ, և Հիսուսի խոսքը, Հիսուսի Ավետարանը քարոզեցին ամեն կողմ, ու այսպիսով այն ատենվան գրեթե ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, Միջերկրական ծովի ավազանի շուրջ գտնվող գրեթե բոլոր ազգերը ընդունեցին քրիստոնեությունը իբրև ճշմարիտ կրոն:

Հայ ժողովուրդն ալ անմասն չմնաց Քրիստոսի այս լույսեն և, ինչպես գիտեք, Քրիստոսի աշակերտներեն ս. Թադեոս և ս. Բարթուղիմեոս առաքյալները քարոզեցին Հայաստան աշխարհի մեջ, ուր տարածվեցավ քրիստոնեությունը, և չորրորդ դարու սկիզբը, հրաշալի պայմաններու ներքև, ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի օրով ամբողջ հայ ժողովուրդը քրիստոնյա մկրտվեցավ, և Հայաստան աշխարհը առաջին քրիստոնյա պետություններեն մեկը դարձավ:

Սիրելի երեխաներ, դուք պետք է լավ հասկնաք, թե ի՞նչ կնշանակե ձեզի համար այսօր քրիստոնյա ըլլալ: Այո՛, դուք քրիստոնյա եք, մկրտված եք, քիչ հետո ալ հաղորդություն պիտի առնեք: Սակայն այսքանը չի բավեր, այսպիսի տոնական առիթներով միայն եկեղեցի գալով մարդ կատարյալ քրիստոնյա չըլլար: Որպեսզի կատարյալ քրիստոնյա ըլլաք, պետք է Հիսուսի պատգամները, Հիսուսի հորդորները կատարեք ձեր կյանքին մեջ, այսինքն բարի տղաներ ըլլաք, հարգեք ձեր ծնողները, սուտ չխոսիք, չարություններ չընեք, ուրիշին չարություն չկամենաք, ձեր ընկերները սիրեք և անոնց նկատմամբ ներողամիտ ըլլաք: Հիսուս ինք ալ ներողամիտ էր և կսիրեր բոլոր մարդիկը: Հիսուս կսիրեր մանավանդ երեխաները: Ուր որ երթար, ամեն բանե առաջ կուզեր, որ երեխաները իր շուրջ հավաքվին:

Սիրելի երեխաներ, անավասիկ քանի մը խորհուրդներ, զոր Հիսուս ինք ավանդեց բոլորին իր ապրած ատեն:

Տեսեք, այսօրվան աշխարհի վրա շատ տեղեր տակավին անկարգություններ կան, թշնամություններ կան՝ մարդոց միջև, ժողովուրդներու միջև, կան նույնիսկ արյունահեղ պատերազմներ. դուք թերթերեն, ռադիոներեն կլսեք: Փառք Աստուծո, ձեր երկիրը խաղաղ է, և մենք կաղոթենք, որ միշտ խաղաղ մնա Ֆրանսան: Բայց հեռու կամ մոտ, ուրիշ երկիրներու մեջ տակավին արյունահեղ ապարքներ կկատարվին, և անարդարություններ տեղի կունենան աշխարհի վրա: Այս բոլորը մեր սրտերը կցավցնեն իբրև քրիստոնյաներ, և դուք ալ, սիրելի երեխաներ, պետք է այս խարարքները դատապարտեք և աղոթեք, որ աշխարհի վրա խաղաղություն ըլլա, որպեսզի մարդիկ իրարու հանդեպ բարի կամեցողությամբ ապրին, իրարու օգնեն, թշնամություններ չըլլան և պատերազմները վերնան:

Այս աղոթքով, այս զգացումներով քիչ հետո մոտեցեք սուրբ Հաղորդության Բաժակին՝ ընդունելու համար Քրիստոսի մարմնի և արյան մասնիկը ձեր մարմնին և հոգիին մեջ, և որոշեցեք կատարյալ քրիստոնյաներ ըլլալ և՛ այժմ, և՛ ապագա ձեր կյանքի ընթացքին:

Դուք գիտեք, որ ես Հայաստանեն կուգամ: Հայաստանի մեջ ալ ձեզի նման տասնյակ հազարավոր, հարյուր հազարավոր երեխաներ կան, որոնք դպրոց կերթան ձեզի պես: Անոնցմե շատ-շատերը եկեղեցի ալ կուգան և ձեզի պես հաղորդություն կառնեն, և անոնց ալ նույնպիսի քարոզ կկարդանք, ինչպես հիմա ձեզի: Անոնք ալ կաշխատին չարություններե հեռու մնալ, մեղքերե հեռու մնալ, կաշխատին բարի և կատարյալ ըլլալ, հարգանք ունենալ դեպի իրենց ծնողները, իրենց նմանները, իրենց մեծերը: Հիմա ես հիշեցի զանոնք՝ դիտելով ձեզ, տեսնելով ձեր հայկական աղվոր աչքերը, որոնք նույն աչքերն են ինչպես Հայաստանի աղջիկներուն և տղաներուն աչքերը:

Սիրելի երեխաներ, Հայաստանեն, սուրբ Էջմիածնեն, ամենայն հայոց Մայր Աթոռ ս. Էջմիածնեն ձեզի կբերեմ Աստուծո օրհնությունը և կմաղթեմ, որ Տերը իր շնորհները առատապես բաշխե ձեզի, և դուք դառնաք բարի,

ազնիվ, կարգապահ և աշխատասեր երեխաներ, դառնաք կատարյալ քրիստոնյաներ, հարազատ զավակները մեր Մայր եկեղեցիին:

«Շնորհք և սէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանսդ»: Ամեն:

Հայրապետական քարոզից հետո հայ մանուկները աջահամբույրով Վեհափառ Հայրապետից ստացան ս. Էջմիածնից բերված հայկական խաչիկներ:

* *
*

Ժամը 13-ին Ինկալացյանների ընտանիքը «Լը Դուայեն» ռեստորանում պատվեց Հայոց Հայրապետին՝ ստանալով Նրա օրհնությունը:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Մայիսի 25-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, առաջնորդարանում Վեհափառ Հայրապետին այցելեց «Սիստեմ է կոմյունիկասիոն» (Սեկոմ) ընկերության տնօրեն Բրունո Մենեսոնը:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետին այցելեցին Փարիզում հրատարակվող «Ազատամարտ» թերթի խմբագրության անդամները՝ Հակոբ Պալյանը, Տիգրան Ծիմպաշյանը (խմբագիր) և Հակոբ Պողոսյանը:

Ժամը 13-ին Փարիզի հայոց կրոնական ընկերակցության ներկայացուցչական ժողովի ատենապետ տիար Նուրհան Ֆրենկյանը ընտանեկան իր հարկի տակ, ի պատիվ Հայոց Հայրապետի, ճաշկերույթ տվեց:

Մայիսի 26-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, դարձյալ առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետին այցելեց վաստակաշատ գիտնական պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը հարցազրույց ունեցավ ֆրանսիական հեռուստատեսության ներկայացուցչի հետ: Նույն օրը, երեկոյան ժամը 19.30-ին, Փարիզի հեռուստակայանից հաղորդվեց Վեհափառ Հայրապետի սույն հարցազրույցը: